Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Դպրոց՝ «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Մերի Զոհրաբյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..3
ԳԼՈՒԽ I
1.1 Ինքնուրույն աշխատանքների դերն ու նշանակությունը տարրական դասարաններում ……5
1.2 Ինքնուրույն աշխատանքի կառուցվածքը …….....7
1.3 Ինքնուրույն գործունեության ձևավորումը ……9
ԳԼՈՒԽ II
2.1 Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը ……11
2.2 Ինքնուրույն աշխատանքի տեսակները ……13
Եզրակացություն …….....16
Օգտագործված գրականության ցանկ ……17

Ներածություն

Պատրաստի հաղորդած գիտելիքները

ծնում են միայն կեղծ գիտություն:

Ա. Բահաթրյան

Հետազոտության արդիականությունը: Արդի դպրոցի խնդիրը ոչ միայն կրթության բարձր մակարդակի ապահովումն է, այլև սովորողների մտածողության զարգացումն է, որը սովորողների մոտ ձևավորում է կարողություններ և հմտություններ ունեցած գիտելիքները ինքնուրույն լրացնելու, դրանք տեղին և ճիշտ օգտագործելուն:

Տարրական դասարաններում ուսուցչի գլխավոր խնդիրն է ուսումնական գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ դա հնարավոր է սովորողների ինքնուրույն գործունեության ճիշտ կազմակերպման միջոցով: Երբ երեխան դեռևս փոքր տարիքից կարողանում է ինքնուրույն սովորել, ապա այդ կարողությունը դառնում է նրա սեփականությունը ամբողջ կյանքի ընթացքում:

Ինքնուրույն աշխատանքի միջոցով հնարավոր է հասնել այն բանին, որ սովորողները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, որոնք պարտադիր են ինքնակատարելագործման և ինքնակրթության համար: Մասնագետների հավաստմամբ, ներկայումս տարեցտարի շատանում են այն սովորողները, որոնք դժվարությամբ են յուրացնում ուսումնական նյութը: Շատերը նշում են, որ սովորողներն իրենց ստացած գիտելիքները չեն կարողանում կիրառել: Այս պատճառով պետք է կարևորել ուսումնական ծրագրերում ինքնուրույն գործունեության եղանակների տիրապետման, մշակման և գործնականում գիտելիքները կիրառելու զարգացման հարցը: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է տալ այդ հնարավորությունը: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն արդեն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Հետազոտության նպատակը՝ վերլուծել տարրական դպրոցում ինքնուրույնության ձևավորման ու զարգացման գործընթացը, կատարված

ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա կատարել եզրակացություն:

Հետազոտության խնդիրները՝

- Ուսումնասիրել ինքնուրույն աշխատանքի դերն ու նշանակությունը:
- Ներկայացնել աշակերտների ինքնուրուն գործունեության կազմակերպման ձևերը:
- Ներկայացնել ինքնուրույն գործունեության ձևավորումը:
- Բացահայտել կիրառման առանձնահատկությունները, արդյունավետ միջոցները:

ԳԼՈՒԽ I

1.1 Ինքնուրույն աշխատանքների դերն ու նշանակությունը տարրական դասարաններում

Ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի տարրական դասարաններում: Այն դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Ինքնուրույն աշխատանքի հմտությունները ինքնին չեն ձևավորվում, դրանք անհրաժեշտ է ձևավորել: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները հստակ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի մասնակցության: Այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է սովորողների մեջ ձևավորել ինքնուրույն աշխատանքի հմտություններ: Այդ գործում մեծ դեր ունի ուսուցիչը, քանի որ սովորողների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար՝ դասից դաս, դասարանից դասարան:

Միայն ինքնուրույն աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել նրան, որ սովորողները զարգացնեն կարողություններ, որոնք կնպաստեն ինքնակրթության և ինքնակատարելագործման աճին:

Ընդհանուր առմամբ, տարբերակվում են աշակերտների ինքնուրույնության չորս մակարդակ.

Առաջին մակարդակ՝ պարզ վերարտադրողական ինքնուրույնություն, երբ սովորողները, իմանալով կանոնները, իրենց ձեռքի տակ ունենալով պատրաստի նմուշը, ինքնուրույն լուծում են առաջադրանքները:

Ինքնուրույնության *երկրորդ մակարդակը* կարելի է անվանել ընտրովի ինքնուրույնություն: Այն դրսևորվում է այսպես, սովորողը մի շարք կանոններից, սահմանումներից կարողանում է ընտրել մեկը և կիրառել այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման գործընթացում: Սովորողն իր ձեռք բերած գիտելիքներով, կարողություններով կարողանում է ընտրել այն կարևորը, որն անհրաժեշտ է տվյալ առաջադրանքի կատարման համար:

Ինքնուրույնության *երրորդ մակարդակը*՝ մասնակի-որոնողական ինքնուրույնությունն է: Աշակերտը կարողանում է պլանավորել և կազմակերպել իր

ինքնուրույն գործունեությունը: Սակայն այս մակարդակում դեռևս սովորողը չի դրսևորում ստեղծագործական մոտեցում:

Ինքնուրույնության *չորրորդ մակարդակը՝* ստեղծագործական-հետազոտական գործունեությթուն ծավալելու մակարդակն է:

Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այն համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն առաջադրանքները պետք է լինեն տարբերակված: Դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները՝ հիշողության, մտածողության, նախապատրաստվածության մակարդակը:

Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման փորձը ցույց է տալիս, որ պարտադիր ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը սովորողներին թույլ է տալիս առավել խորը և ճկուն գիտելիքներ ձեռք բերել, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդումը:

1.2 Ինքնուրույն աշխատանքի կառուցվածքը

Սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է 6 հիմնական փուլ:



1. **Նախապատրաստական փուլ**

Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում սովորողներին պահպանել կարգ ու կանոն, կատարել ինքնաստուգում, աշխատել ուշադիր:

2. **Կազմակերպչական փուլ**

Բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևոր պայման է, արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:

3. Կողմնորոշիչ փուլ

Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Սովորողը իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Կարելի է այս փուլում բաշխել աշխատանքային պլանը: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

4. Հիմնական փուլ

Այս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:

5. Ամփոփիչ փուլ

Այս փուլում կատարվում է անդրադարձ: Գնահատվում, քննարկվում, վերլուծվում են ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝

6. Ստուգիչ փուլ, որի ընթացքում սովորողը կատարելով առաջադրանքը՝ ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

1. Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի ո՞ր փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը:
2. Ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

1.3 Ինքնուրույն գործունեության ձևավորում

Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում:

Տարիքային յուրաքանչյուր փուլ բնութագրվում է ոչ միայն իմացական զարգացման որոշակի պոտենցիալ հնարավորություններով, այլ նաև մտածողության տիպով: Այս տեսակ հաշվառումն ուսուցման գործընթացում անհրաժեշտ պայման է կրթության յուրաքանչյուր աստիճանում զարգացման բավարար մակարդակ ապահովելու համար: Օրինակ, հայտնի է, որ մանկահասակ երեխայի մտածողությունն ակնառու-պատկերավոր բնույթ ունի: Սա նշանակում է, որ այս տարիքի երեխաների ուսուցումն արդյունավետ է, եթե այն իրագործվում է պրակտիկ գործունեության միջոցով, որի պայմաններում սովորողը շատ բաներ հասկանում է սեփական փորձով: Համապատասխան դասագրքերն, իրենց հերթին, պետք է հարուստ լինեն նկարազարդման նյութերով, տեքստերը հեղեղված չլինեն սահմանումներով ու բանաձևերով:

Մարդն առհասարակ, երեխաները՝ առավել ևս, հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելու: Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել: Այսինքն, երեխայի համար ուսուցումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ ինքն է իր կրթության սուբյեկտը, երբ ինքն է գիտակցաբար դնում կրթական նպատակներ և ազատորեն կազմակերպում իր ուսումնական գործունեությունը՝ դրված նպատակներին հասնելու համար: Այս դեպքում է միայն գիտելիքն անձի համար իմաստ ու արժեք ստանում, դառնում հոգևոր հարստություն:

Դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից երեխայի ծնողը և ուսուցիչը պետք է միասին աշխատեն, սովորողի ինքնուրույն գործունեությունը զարգացնելու համար:

Մենք՝ ուսուցիչներս, հաճախ չենք վստահում աշակերտներին, մտածում ենք, որ նրանք չեն կարող այս կամ այն աշխատանքը կատարել առանց մեր միջամտության: Սակայն լինում են դեպքեր, երբ մենք տեսնում ենք, որ աշակերտը կարող է ինքնուրույն կատարել մեր սպասածից ավելին:

Ինքնուրույն գործունեության մաս են կազմում.

1. սեփական ուժերն ու կարողություններն անաչառ գնահատելը և ըստ այդմ ուսումնական, աշխատանքային գործունեություն ծավալելը
2. սեփական գործի կարևորությունը գիտակցելը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորելը

3. ժամանակը ճիշտ տնօրինելը, աշխատանքի և հանգստի ժամակարգ /ռեժիմ/ մշակելը և պահպանելը, սեփական վարքը վերահսկելը
4. սեփական մարմինը խնամելը, այն մարզելը
5. ինքնակրթությամբ զբաղվելը
6. տարբեր իրավիճակներում կողմնորոշվելը, սեփական քայլերը և դրանց հետևանքները գնահատելը

Շատ հաճախ ուսուցիչները թույլ չեն տալիս, որ սովորողներն ամենահասարակ աշխատանքներն ինքնուրույն կատարեն: Այդ պատճառով սովորողների մեջ չի ձևավորվում ինքնավստահություն: Ես աշխատում եմ կազմակերպել այնպիսի աշխատանքներ, որոնք կնպաստեն սովորողների ինքնուրույն գործունեության զարգացմանը: Հաճախակի եմ զրուցում ծնողների հետ և առաջարկում, որ սովորողներին հնարավորություն տան ինքնուրույն կատարել տնային հանձնարարությունները և օգնեն միայն անհրաժեշտության դեպքում: Այդպես երեխաներն ավելի շուտ կդառնան ինքնուրույն: Որպեսզի սովորողի մեջ ձևավորվի իր ուժերի նկատմամբ վստահություն, դրան պետք է նպաստեն տանը՝ ծնողը, դպրոցում՝ ուսուցիչը:

ԳԼՈՒԽ II

2.1 Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը

Ժամանակակից դպրոցում սովորողների ուսումնական գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է երեք ձևով.

Համընդհանուր ձևի դեպքում դասարանի բոլոր սովորողների գործունեությունը, ուսուցչի ղեկավարության պայմաններում, ընթանում է համատեղ:

Սովորողների ***անհատական աշխատանքի*** կազմակերպումը բնութագրվում է սովորողների ինքնուրույնության աստիճանով և օգնում է նրանց մտավոր ընդունակություններն առավելագույն չափով զարգացնելուն: Ուսուցիչը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի ուսումնական իրական հնարավորություններն ու անհատական առանձնահատկությունները՝ կազմակերպում է անհատական աշխատանքները: Դրանք տարաբնույթ են՝ քարտ-առաջադրանքներ, թեստեր, ստեղծագործական առաջադրանքներ, աշխատանք՝ դասագրքերի շուրջ, տեղեկատվության, քրեստոմատիկ նյութերի և այլնի շուրջ:

Սովորողների ուսումնական գործունեության ***խմբային ձևը*** կազմակերպվում է դիդակտիկական խնդիրներ լուծելու համար: Այս դեպքում դասարանը բաժանվում է խմբերի, որոնք բաղկացած են լինում 3-6 հոգուց: Յուրաքանչյուր խումբ ուսուցչից ստանում է առաջադրանք: Այն սովորաբար լինում է անհատական կամ շերտավորված: Աշակերտները հանձնարարությունը կատարում են ուսուցչի կամ

խմբավարի ղեկավարությամբ: Խմբի ղեկավար է նշանակվում որևէ առաջավոր աշակերտ:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, ուսուցիչը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել սովորողների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները և վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքի տեսակը, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

2.2 Ինքնուրույն աշխատանքի տեսակները

Դիտարկենք. թե ինքնուրույն աշխատանքի ի՞նչ տեսակներ կարելի է կիրառել տարրական դասարաններում:

Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների:

- **Ըստ ուսումնական նպատակների**

Այս նպատակով շատ հարմար է դիագնոստիկ թեստը: Սա նպատակահարմար է կիրառել թեմայի յուրացումն աշակերտների կողմից ստուգելու և ըստ առարկայական չափորոշիչների նրանց առաջադիմությունը ամփոփելու համար: Թեստի հիմնական նպատակը սովորողների գիտելիքները, կարողությունները ու հմտությունները տարբերակելն է և սովորողների պատրաստվածության մակարդակը չափելն ու գնահատելը: Թեստը կազմվում է երեխաների հնարավորություններին համապատասխան: Շատ կարևոր է թեստի անցկացման ճիշտ մեթոդի ընտրությունը և անցկացման կարգի պահպանումը: Պետք է այնպես անել, որ աշակերտներն իրարից չարտագրեն, այլապես խախտվում է գրավոր աշխատանքի ամբողջ տրամաբանությունը, իսկ աշխատանքի ստուգումն ու գնահատումը դառնում է խիստ սուբյեկտիվ:

- **Ըստ ճանաչողական գործունեության բնույթի**

1. *Ըստ տրված նմուշի* (օրինակ՝ գրել տառեր, թվեր, սոսնձել տուփ և այլն), այսինքն՝ աշխատանքներ, որոնք առավելապես հիմնված են ընդօրինակման վրա: Այսպիսի աշխատանքների կատարման ընթացքում աշակերտների ինքնուրույն գործողությունները սահմանափակվում են պարզ վերարտադրման միջոցով՝ ըստ նմուշի կրկնելով գործողությունները: Այնուամենայնիվ, այսպիսի աշխատանքների դերը բավականին մեծ է:

2. *Կառուցողական*, որոնք ստեղծագործական մոտեցում են պահանջում: Ընդ որում, կամ ցույց են տալիս առարկան, որի շուրջ պետք է աշխատել, կամ էլ նշում են հարցը, թեման, որը պետք է բացահայտեն: Օրինակ՝ պատրաստել որևէ խաղալիք, հորինել շարադրություն որևէ թեմայով և այլն: Սովորողներին ներկայացվում է նշանակալի ազատություն, ինքնուրույնություն ինչպես բովանդակության որոշման, այնպել էլ աշխատանքի հնարների ընտրության մեջ: Այս տիպի ինքնուրույն աշխատանքները հիմք են ձևավորում սովորողի ստեղծագործական գործունեության հետագա զարգացման համար:

3. *Ստեղծագործական–հետազոտական*, որոնք երեխաների ինքնուրույն գործունեության գագաթնակետն են հանդիսանում: Այդ աշխատանքները ամրապնդում են գիտելիքների ինքնուրույն որոնման հմտությունները: Դրանք ստեղծագործող անձի ձևավորման արդյունավետ միջոցներից են: Ստեղծագործական բնույթի ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են ընձեռնում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ:

➢ **Ըստ կազմակերպման ձևի**

1. Համընդհանուր, երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը
2. Խմբային, երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա
3. Անհատական, երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:

➢ **Ըստ դիդակտիկ նյութերի կիրառության**

1. *Աշխատանք դասագրքով*, տեղեկատու գրականության շուրջ (բառարաններ, հանրագիտարաններ և այլն): Տարրական դասարաններում մեծ տեղ է հատկացվում գրքի, գեղարվեստական տեքստի, նկարազարդման շուրջ կատարվող ինքնուրույն աշխատանքին: Գրքի շուրջ ինքնուրույն աշխատելու կարողությունը սովորելուն նպաստող ամենակարևոր կարողություններից է: Առանց այդ կարողության յուրացման հնարավոր չէ իրականացնել գիտելիքների լիարժեք յուրացումը, քանի որ յուրացման գործընթացի կարևոր կառուցվածքային տարրերը, ինչպիսիք են՝ իմաստավորումը և ամրապնդումն իրականացվում է դասագրքի շուրջ կատարվող աշխատանքի ընթացքում: Գրքի շուրջ աշխատելու անկարողության պատճառով ուսումնական աշխատանքն սովորողների համար դառնում է տանջալի աշխատանք: Գրքի շուրջ աշխատելու կարողությունների զարգացումն իրականացվում է բոլոր առարկաների դասերի ընթացքում:
2. *Շարադրություններ* (ըստ հենակետային բառերի, նկարների շուրջ և այլն):
3. *Դիտումներ և գործնական աշխատանքներ:* Դիտումների համար որպես դիտարկվող առարկաներ կարող են լինել շրջապատող առարկաները և երևույթները: Սովորողները հաշվում են, չափում, ստեղծում: Նրանք դիտարկում են առարկաները և երևույթները անմիջականորեն բնության մեջ անցկացնում են փորձեր՝ կատարելով գործնական աշխատանքներ:

Դիտարկումների, փորձերի, գործնական և լաբորատոր աշխատանքների հետ կապված ինքնուրույն աշխատանքները ունեն շատ մեծ նշանակություն, քանի որ

նպաստում են աշակերտների դիտողականության, հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

4. *Աշխատանք բաշխիչ նյութերի կիրառման*
5. *Գրաֆիկական աշխատանքներ*

6. Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են *դիդակտիկ նյութերի ստեղծման* հետ: Սովորողները պատրաստում են ինքնաշեն գրքեր «ես և շրջակա առարկայի» ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:

➢ **Ըստ կատարման տեղի**

1. Դասարանում
2. Արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ
3. Տանը

Եզրակացություն

Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռք բերված ինքնուրույնության արտահայտում է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Տարրական դպրոցի ուսուցիչների խնդիրն է ուսումնական գործունեությունը կազմակերպել այնպես, որ նպաստի սովորողների ակտիվության զարգացմանը: Երբ ուսուցիչը բավարար ուշադրություն չի դարձնում այդ կարևոր գործոնին, այդ դեպքում աշակերտն այլևս առանձնակի ակտիվություն չի դրսևորում խնդիրների լուծման նպատակով ինքնուրույն ուղիների որոնման գործում:

Իմ աշխատանքային փորձը ցույց է տվել, որ սովորողներն ավելի մեծ սիրով են կատարում այն աշխատանքները, որոնք իրենց հոգեհարազատ են: Նրանք սիրում են, երբ իրենք ազատ են իրենց ընտրության և գործողությունների մեջ: Այստեղ ուղղակի ուսուցիչը պետք է կարողանա ստեղծել առողջ միջավայր, որտեղ սովորողները միմյանց կօգնեն, իրար կարծիք հաշվի կառնեն: Այդպիսի աշխատանքների հիմքը պետք է դրվի դեռևս առաջին դասարանից: Աշակերտը պետք է համոզված լինի, որ ինքը կարող է միայնակ կատարել իրեն տրված հանձնարարությունը: Հակառակ դեպքում նա կվախենա ինքնուրույն աշխատելուց և կստիպի ծնողին կամ ուսուցչին, որ իրեն ուղղություն տան, թե ինչպես կատարի տրված աշխատանքը: Այդպիսի աշակերտները նույնիսկ մեծ տարիքում զուրկ են լինում ինքնուրույն գործունեություն իրականացնելուց:

Չպետք է սովորողին տրվի պատրաստի արդյունք, չպետք է սովորողների գործողությունները կամ կախված լինեն ուսուցչի անմիջական հրահանգներից: Այսպիսի մոտեցումը արգելակում է սովորողների մտավոր զարգացումը և միջին դպրոց տեղափոխվելով նրանք հայտնվում են անօգնական վիճակում:

Այսպիսով, ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները պետք է նպաստեն սովորողի ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Ինչպես ասել է Մ. Սարյանը՝ «Մարդը միայն ինքնուրույնությամբ է մարդ դառնում»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Ա. Բալայան, Կ. Չիբուխչյան «Մայրենիի դասերի պլանավորումը» 2016 թ.

2. Կ. Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխչյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Ուսուցչի ձեռնարկ, մայրենի 2-4, 2011 թ.

3. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, «Մեթոդական աշխատանքը դպրոցում» ձեռնարկ 2014 թ.

4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, «50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար» 2013թ.

5. Համացանց